Կարգապահական գործ թիվ ԿԳ-16051

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 193-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ ԿԳ/126-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ նաև Պալատ) խորհուրդը (այսուհետ նաև Խորհուրդ), նիստը նախագահող՝ Մարտուն Փանոսյանին, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Կարեն Մեժլումյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Հարություն Հարությունյանի, Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Տիգրան Խուրշուդյանի կազմով

մասնակցությամբ՝ կարգապահական վարույթով պատասխանող, փաստաբան Քրիստինե Ստեփանյանի,

քննության առնելով փաստաբան Քրիստինե Ստեփանյանին (արտոնագիր 148) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

18.02.2016թ. Պալատում մուտքագրվել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև Դատարան) դատավոր Հովիկ Շահնազարյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 12.02.2016թ. որոշումը (այսուհետ՝ Որոշում), որում նշվել է, որ Փաստաբան Քրիստինե Ստեփանյանի դատական նիստում դրսևորած վարքագիծը անհարգալից վերաբերմունք է Դատարանի և իր կոլեգա փաստաբանի նկատմամբ, մասնավորապես՝ դատական նիստերի դահլիճն առանց Դատարանի թույլտվության ու առանց Դատարանի կողմից հարգելի ճանաչված պատճառների լքելը, ինչի արդյունքում փաստաբանը դատական նիստում չի լսել Դատարանի օրինական կարգադրությունները, չի լսել իր իսկ «հայցադիմում»-ի ընդունման կապակցությամբ քննարկման արդյունքում Դատարանի կողմից կայացվող որոշումը, արդյունքում՝ փաստաբան Քրիստինե Ստեփանյանը դատական նիստում ներկա գտնվողների ներկայությամբ անհարգալից վերաբերմունք է ցուցաբերել ոչ միայն Դատարանի (արդարադատության) և առհասարակ արդարադատության

նկատմամբ, այլև՝ իր գործընկեր-փաստաբանի նկատմամբ:

Դատարանը՝ վկայակոչելով ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ, 7-րդ, 9-րդ, և 15-րդ հոդվածների 1-ին մասերը, 63-րդ հոդվածը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ 21-րդ և 27-րդ հոդվածները, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 1.1, 2.2.2., 2.2.3, 2.7.1., 4.1, 4.2, 5.1.1, 5.1.2 և 5.2.1 կետերը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ, 144-րդ, 144.1-րդ և 145-րդ հոդվածներով՝ 12.02.2016թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որի 1-ին կետով որոշել է. *«1. Թիվ ԵԱՔԴ/2420/02/12 քաղաքացիական գործով գործին մասնակցող կողմի՝ Նարինե Գասպարյանի ներկայացուցիչ, փաստաբան Քրիստինե Ստեփանյանի (փաստաբանական գործունեության արտոնագիր 148, տրված՝ 01.10.2006 թվականին) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու նպատակով՝ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմել ՀՀ փաստաբանների պալատին:»:*

<u>2. Պալատի նախագահի կողմից կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի կողմից թիվ 83-Ա/ԿԳ-16051 որոշմամբ փաստաբան Քրիստինե Ստեփանյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1. կետի խախտման հատկանիշներով: Նշված որոշմամբ կարգապահական վարույթով դիմող է ճանաչվել Դատարանը, իսկ գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Ռոբերտ Մանվելյանին:

<u>3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Դատարանը նշել է, որ Նարինե Գասպարյանի կողմից հայցադիմում է ներկայացվել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ընդդեմ Վազգեն Մխիթարյանի՝ Երևան քաղաքի Թավրիզյան 46 հասցեում գտնվող անշարժ գույքից Հայցվորին սեփականության իրավունքով պատկանող 1/2-րդ բաժնեմասը բնեղենով առանձնացնելու, իսկ դրա անհնարինության դեպքում գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու, ստացված գումարը ըստ բաժինների սեփականության մասնակիցների միջև բաժանելու պահանջների մասին:

Վազգեն Մխիթարյանի կողմից հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ Նարինե Գասպարյանի՝ Վազգեն Վոլոդյայի Մխիթարյանի ընդդեմ Նարինե Գասպարյանի՝ Երևան քաղաքի Թավրիզյան 46 տան նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունքում կողմերի բաժինները փոփոխելու, նշված գույքի 2/3-րդ բաժնեմասը որպես Հայցվորի բաժին սահմանելու, նշված գույքի 1/3-րդ բաժնեմասը որպես Պատասխանողի բաժին սահմանելու պահանջների մասին:

Որոշմամբ ներկայացվել է թիվ ԵԱՔԴ/2420/02/12 քաղաքացիական գործի նախապատմությունը և նշվել է, որ 15.10.2015 թվականի դատական նիստում Դատարանը փաստաբանի նկատմամբ կիրառել է դատական սանկցիա՝ նախազգուշացում (հիմք՝ 15.10.2015 թվականի դատական նիստի ձայնագրությունը),

բավարարել է փաստաբանի խնդրանքն ու ժամկետ է տրամադրվել, որպեսզի վերջինս ներկայացնի ինքնաբացարկի գրավոր միջնորդություն:

24.11.2015 թվականին նշանակված դատական նիստին փաստաբանը դատարանին անհայտ պատճառով չի մասնակցել, ինքնաբացարկի մասին որևէ գրավոր միջնորդություն չի ներկայացրել:

26.01.2016 թվականին նշանակված դատական նիստում փաստաբանը խնդրել է ժամկետ տրամադրել՝ հայցադիմումի հստակեցում (փոփոխություն կամ լրացում) ներկայացնելու համար, իսկ Դատարանը բավարարել է միջնորդությունը:

12.02.2016 թվականին նշանակված դատական նիստում փաստաբանը ներկայացրել է հայցադիմում՝ խնդրելով այն ընդունել, իսկ Դատարանի՝ այն որպես հայցադիմում, թե հայցի առարկայի ու հիմքի փոփոխություն (լրացում) ընդունելու մասին դիմում ընդունելու վերաբերյալ հարցադրմանն ի պատասխան՝ կոնկրետ դիրքորոշում չի ներկայացվել, սակայն Դատարանի պարզաբանումներից հետո փաստաբանը նշել է, որ դա կարող է ընդունվել նաև որպես հայցի փոփոխություն (լրացում), ուստի Դատարանը դատական նիստում քննարկել է ներկայացված պահանջների ընդունման հարցը:

Որոշմամբ նշվել է, որ 12.02.2016 թվականին կայացած դատական նիստում, երբ Դատարանը քննարկել է փաստաբանի «հայցադիմումը» որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32 և 149.[7] հոդվածների հիմքով ներկայացված դիմում ընդունելու հարցը, լսել է կողմերի կարծիքները ու պետք է կայացներ այդ մասին համապատասխան որոշում, *<u>փաստաբանը մի քանի անգամ խանգարել է դատական նիստի կարգը, խոչընդոտել է նիստի բնականոն ընթացքը, իսկ վերջում՝ առանց Դատարանի որոշումը լսելու ու առանց Դատարանի թույլտվության, միաժամանակ առանց դատական նիստերի դահլիճը չլքելու կապակցությամբ Դատարանի պահանջը հաշվի առնելու, այնուամենայնիվ, լքել է դատական նիստերի դահլիճը՝ դատական նիստին ներկա գտնվողների ներկայությամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելով Դատարանի (արդարադատության), դատավարության մասնակիցների, այդ թվում՝ իր գործընկեր մյուս փաստաբանի հանդեպ</u>*:»:

Դատարանն իր որոշման մեջ նշել է նաև, որ քննարկվող գործով Փաստաբանի վարքագծին ճիշտ որակում և բնորոշում տալու նպատակով՝ Դատարանը հարկ է համարում վկայակոչել կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշման կայացման դատական նիստի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները.

Այսպես, 12.02.2016 թվականին նշանակված դատական նիստում Փաստաբանը ներկայացրել է իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման ու Պատասխանողին վտարելու պահանջների մասին հայցադիմում՝ խնդրելով այն ընդունել, իսկ Դատարանի՝ այն որպես հայցադիմում, թե հայցի առարկայի ու հիմքի փոփոխություն (լրացում) ընդունելու մասին դիմում ընդունելու վերաբերյալ հարցադրմանն ի պատասխան՝ փաստաբանը կոնկրետ դիրքորոշում չի ներկայացրել, որից հետո Դատարանը փաստաբանին բառացի պարզաբանել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149.7 հոդվածով սահմանված պահանջը, նշել է, որ Դատարանի վարույթում է գտնվում բաժնեմասի

առանձնացման պահանջը, իսկ «հայցադիմում» վերտառությամբ փաստաթղթում փաստաբանը պահանջում է հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող փաստ ու վտարել Պատասխանողին, ուստի այս առումով պահանջել է ներկայացնել հիմնավորում ու հստակեցնել խնդրանքը:

Ի պատասխան Դատարանի մի շարք պարզաբանումների՝ Փաստաբանը նշել է, որ Դատարանի վարույթում գտնվող հայցադիմումն ինքը չի ներկայացրել, դա ներկայացրել է այլ փաստաբան, ուստի ինքը փոփոխում է դա այս գործով, քանի որ վեճի առարկայի կողմերը նույն անձինք են, վեճի առարկան նույնն է, գտել է, որ բաժնեմասի առանձնացման պահանջի էությունից է բխում իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատումը ու դրանից բխող կողմին վտարելու պահանջը՝ կատարելով նաև հետևյալ արտահայտությունը. *«դատարանը արդեն իսկ ծանոթ է գործին, ինչու՞ նորից մեկ այլ դատարան ժամանակ կորցնի, բացարձակ անիմաստ բան է մեկ այլ հայցով դիմելը»*:

Ի պատասխան փաստաբանի դիրքորոշման՝ Դատարանը, ցուցաբերելով փաստաբանի նկատմամբ հարգալից վերաբերմունք, նշել է, որ կողմերը պետք է գործեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան պահանջներին համապատասխան, ուստի ներկայացված պահանջների ընդունման հարցը պետք է քննարկվի օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ի պատասխան հակառակորդ կողմի փաստաբան Ա. Պետրոսյանի հարցադրման՝ հայցադիմումով ներկայացված՝ բաժնեմասի առանձնացման պահանջից հրաժարվելու մասին, փաստաբան Քրիստինե Ստեփանյանը նշել է, որ ինքը պահանջն է փոփոխել՝ կատարելով հետևյալ արտահայտությունը *«հրաժարվելս որն է, ես եմ դա որոշում, դա իմ իրավունքն է»*:

Դատարանը նշել է, որ այդ կապակցությամբ, կրկին ցուցաբերելով փաստաբանի նկատմամբ հարգալից վերաբերմունք, ելնելով գործի քննության ու արդարադատության շահերից, բառացի պարզաբանել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149.[7] հոդվածը, վկայակոչել է այն փաստը, որ Դատարանում հայցը ներկայացվել է բաժնեմասի առանձնացման պահանջով:

Մինչդեռ փաստաբան Քրիստինե Ստեփանյանը նշել է, որ այդ հայցն ինքը չի ներկայացրել, դա իր համար հիմք չէ, իսկ ինքը փոխում է հայցի հիմքն ու առարկան, որն էլ իրավաբանորեն շատ պարզ գործողություն է:

Դատարանը, լսելով փաստաբանի կարծիքը, հնարավորություն է տվել մյուս կողմի փաստաբան Ա. Պետրոսյանին ներկայացված «հայցադիմում»-ի վերաբերյալ հայտնելու դիրքորոշում, իսկ վերջինս հայտնել է, որ հայցի առարկայի ու հիմքի փոփոխությունն ամբողջությամբ փոփոխում է բաժնեմասի առանձնացման վերաբերյալ ներկայացված հայցի էությունը, իսկ բաժնեմասի առանձնացման պահանջի մասին Դատարանի վարույթում գտնվող հայցից կողմը չի հրաժարվում:

Վերը նշված առարկությունների ներկայացման ժամանակ փաստաբան Քրիստինե Ստեփանյանն առանց Դատարանի օրինական կարգադրության անընդհատ միջամտել է, թույլ չի տվել, որպեսզի կողմը հնարավորություն ունենա հավասար պայմաններում իր առարկությունը ներկայացնելու Դատարանին:

Դատարանը, կրկին հարգանքով մոտենալով փաստաբանին, հորդորել է հետևել դատական նիստում նախագահողի սահմանած կարգին, չխոչընդոտել

նիստի բնականոն ընթացքին, հարգել իր գործընկերոջը, որպեսզի վերջինս ևս դիրքորոշում արտահայտի ու նրա դիրքորոշումը ևս հասանելի լինի Դատարանին, այն դեպքում, երբ նա փաստաբանին մինչ այդ պատշաճ լսել էր ու որևէ անգամ չէր ընդհատել, պահանջել է մինչև վերջ լսել մյուս կողմին, որից հետո փաստաբանին ևս կտրամադրվի արտահայտվելու հնարավորություն:

Դրանից անմիջապես հետո, երբ փաստաբան Ա. Պետրոսյանը շարունակել է Դատարանին ներկայացնել իր առարկությունը, փաստաբան Քրիստինե Ստեփանյանը կրկին միջամտել է՝ կատարելով հետևյալ արտահայտությունը. *«վայ, ես մի հատ պալատ երևի գրություն ուղարկեմ, տեսնեն, սրուգեն, թե Ձեր արտոնագիրը էդ ով է տվել»:*

Դատարանը, կրկին անգամ հարգանքով դիմելով Քրիստինե Ստեփանյանին, վերը նշվածի կապակցությամբ պահանջել է Փաստաբանից դրսևորել պատշաճ վարքագիծ, նախազգուշացնելով, որ հակառակ դեպքում՝ Դատարանը կկիրառի դատական սանկցիա, քանի որ դատական նիստերի դահլիճում կարգը սահմանում է Դատարանը, իսկ կողմերը պարտավոր են ենթարկվել այդ կարգին:

Մինչդեռ փաստաբան Քրիստինե Ստեփանյանը կրկին առանց Դատարանի թույլտվության միջամտել և փորձել է ընդհատել հակառակորդ փաստաբանին՝ վերջինիս հասցեին կատարելով հետևյալ արտահայտությունը. *«փոխում եմ հիմքը, չե՞ք հասկանում»:* Դրա արդյունքում Դատարանը կրկին պահանջել է փաստաբան Քրիստինե Ստեփանյանից չխանգարել կողմին, լսել ու թույլ տալ, որ նա արտահայտվի՝ հարգելով իր գործընկերոջը, սակայն նա կրկին միջամտել է ու ընդհատել է հակառակորդ կողմի փաստաբանի ելույթը:

Լսելով կողմերին՝ Դատարանը, երբ արդեն պետք է ներկայացված պահանջների ընդունման կապակցությամբ որոշում կայացներ, Քրիստինե Ստեփանյանը, խնդրելով թույլտվություն, սակայն առանց Դատարանի թույլտվության, հանդես է եկել հետևյալ բովանդակություն ունեցող հայտարարությամբ. *«քաղաքացիական գործի նյութերին ծանոթանալու ժամանակ ես պարզեցի, որ պատասխանողների իրավահաջորդի ներկայացուցիչն ամենայն հավանականությամբ չունի պատշաճ լիազորություններ ներկայացնելու Է. Վարդանյանի շահերը, քանի որ լիազորագիրը հասարակ գրավոր ձևով է, դրան կցված չէ վերջինիս անձնագիրը, իսկ ես գիտեմ, որ նա բացակայում է ՀՀ-ից, այսինքն՝ լիազորագիրը միգուցե նույնիսկ չի էլ ստորագրել Է. Վարդանյանը»*:

Վերը նշված հայտարարության կապակցությամբ Դատարանը, կրկին փաստաբան Քրիստինե Ստեփանյանին դիմելով հարգանքով, նշել է, որ եթե փաստաբանը դա կապացուցի, ապա այդ հարցին կանդրադառնան, քանի որ Դատարանն արդեն իսկ պատշաճ է համարել փաստաբան Ա. Պետրոսյանի լիազորությունները, այսինքն՝ առկա է լիազորագիրը, որտեղ դրված Է. Վարդանյանի ստորագրությունը, իսկ նման պայմաններում այդ լիազորությունը չի կարող վիճարկվել, քանի որ Դատարանն է ստուգում ու որոշում, թե ներկայացուցչի լիազորությունները պատշաճ են, թե՝ ոչ, այդ հարցի լուծումը կողմին վերապահված չէ:

Մինչդեռ ի պատասխան Դատարանի դիրքորոշման՝ Քրիստինե Ստեփանյանն, առանց նախագահողի դիրքորոշումը մինչև վերջ լսելու, զուգահեռաբար կատարել է

հետևյալ արտահայտությունները. *«ես ոչ մի բան չունեմ ապացուցելու, իսկ Դատարանը չի ստուգել լիազորությունները պատշաճ ձևով, կասկածի տակ եմ առնում Դատարանի գործողությունները, քանի որ լիազորագրին չի կցված լիազորողի անձնագրի պատճենը»:*

Որոշմամբ նշվել է, որ Դատարանը պահանջել է Քրիստինե Ստեփանյանից հարգանք ցուցաբերել Դատարանի ի պաշտոնե իրականացվող գործողություններին, որին ի պատասխան՝ փաստաբանը նշել է, որ հարգանք կցուցաբերի Դատարանի միայն օրինական գործողություններին, իսկ Դատարանը չի ստուգել լիազորությունները:

Դատարանը փաստաբանին պարզաբանել է, որ կա նախագահողի գործողություններին առարկելու ինստիտուտ կամ կարող է համապատասխան միջնորդությամբ հանդես գալ, սակայն Քրիստինե Ստեփանյանը նշել է, որ առարկում է, գտնում է, որ իրավահաջորդի լիազորությունները պատշաճ չեն:

Դատարանը փաստաբանի հայտարարության կապակցությամբ հայտնել է իրավական դիրքորոշում առ այն, որ Դատարանի կողմից ստուգված և ընդունված փաստաբան Ա. Պետրոսյանի լիազորությունները պատշաճ են այնքան ժամանակ, քանի դեռ Դատարանը հակառակի մասին համապատասխան որոշում չի կայացրել: Դատարանը երկու ներկայացուցիչների լիազորությունների մասով մինչ այդ արդեն որոշում կայացրել է, ուստի այնպես ինչպես Փաստաբանը, այնպես էլ փաստաբան Ա. Պետրոսյանը երկուսով միասին Դատարանում հանդես են գալիս պատշաճ լիազորություններով:

Մինչդեռ, փաստաբան Քրիստինե Ստեփանյանը կրկին միջամտել է՝ հայտնելով, որ ի տարբերություն հակառակորդ փաստաբանի, իր լիազորությունները պատշաճ են, քանի որ ինքը բոլոր փաստաթղթերը ներկայացրել է:

Դատարանն արձանագրել է, որ փաստաբան Քրիստինե Ստեփանյանի հայտարարության կապակցությամբ Դատարանն իր համապատասխան դիրքորոշումն արդեն իսկ արտահայտել է, որին ի պատասխան փաստաբանը նշել է, որ ցանկանում է ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնել նախագահողին, իսկ Դատարանը նշել է, որ Փաստաբանի ներկայացրած՝ «հայցադիմումի»-ն ընդունելու վերաբերյալ խնդրանքի վերաբերյալ կողմերին լսել է, դրա շուրջ քննարկումն ավարտվել է, ուստի համապատասխան որոշում այդ մասին կայացնելուց հետո կանդրադառնա կողմի մեկ այլ միջնորդությանը, եթե այդպիսին լինի:

Փաստաբանը պահանջել է չքննարկել ոչինչ, միաժամանակ, ի պատասխան Դատարանի հարցադրման՝ հայցադիմումը հետ վերցնելու վերաբերյալ, փաստաբան Քրիստինե Ստեփանյանը նշել է, որ ինքը հետ չի վերցնում այն, իսկ ինքնաբացարկը կներկայացնի երեք օրում:

Դատարանը նշել է, որ եթե միջնորդություն է ներկայացվել Դատարանին պահանջներն ընդունելու մասին, իսկ փաստաբանն այն հետ չի վերցնում, և այն քննարկվել է, ապա Դատարանը պետք է դրա վերաբերյալ որոշում կայացնի, իսկ փաստաբանը կատարել է հետևյալ արտահայտությունները. *«ես չեմ ուզում, որ իմ ներկայացրած «հայցադիմում»-ը նախագահողը քննի, թող մեկ այլ դատավոր այն քննի, ես Ձեզ չեմ վստահում, կներկայացնեմ ինքնաբացարկ, որի հիմքերը կբերեմ երեք օրում գրավոր»:*

Ըստ Որոշման՝ Դատարանը նշել է, որ ներկայացված միջնորդության կապակցությամբ պետք է կողմը լսի Դատարանի որոշումը՝ դատական նիստերի դահլիճում մնալով ու չլքելով այն, այնինչ փաստաբան Քրիստինե Ստեփանյանը, չենթարկվելով ու չկատարելով Դատարանի պահանջը *«ոչ», «այլևս ես չեմ ցանկանում, որպեսզի գործի քննությանը Դուք մասնակցեք»* արտահայտություններով, առանց Դատարանի կողմից հիմնավոր ճանաչված որևէ պատճառի լքել է դատական նիստերի դահլիճը:

Ըստ Որոշման՝ Դատարանը, նկատելով, որ փաստաբան Քրիստինե Ստեփանյանն առանց Դատարանի պահանջներին ու դիրքորոշումներին որևէ ուշադրություն դարձնելու, պատրաստվում լքել դատական նիստերի դահլիճը, Քրիստինե Ստեփանյանից պահանջել է չգնալ այդ քայլին ու չլքել դատական նիստերի դահլիճը՝ պարզաբանելով, որ դրանով նա անհարգալից վերաբերմունք է դրսևորում Դատարանի հանդեպ, սակայն փաստաբան Քրիստինե Ստեփանյանն, այնուամենայնիվ, լքել է դատական նիստերի դահլիճը՝ որևէ նշանակություն չտալով Դատարանի պարզաբանմանն ու պահանջներին (անգամ հնարավորություն է տրվել հետ վերադառնալ ու չլքել դահլիճը):

Դատարանը՝ վկայակոչելով ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 7-րդ և 8-րդ մասերի դրույթները տվյալ դեպքում 12.02.2016թ. դատական նիստում կիրառել է դատական սանկցիա՝ հիմքում դնելով փաստաբան Քրիստինե Ստեփանյանի դատական նիստում դրսևորած վարքագիծը, մասնավորապես՝ դատական նիստերի դահլիճն առանց Դատարանի թույլտվության ու առանց Դատարանի կողմից հարգելի ճանաչված պատճառների լքելը, ինչի արդյունքում փաստաբանը դատական նիստում չի լսել Դատարանի օրինական կարգադրությունները, չի լսել իր իսկ «հայցադիմում»-ի ընդունման կապակցությամբ քննարկման արդյունքում Դատարանի կողմից կայացվող որոշումը, արդյունքում՝ փաստաբան Քրիստինե Ստեփանյանը դատական նիստում ներկա գտնվողների ներկայությամբ անհարգալից վերաբերմունք է ցուցաբերել ոչ միայն Դատարանի (արդարադատության) և առհասարակ արդարադատության նկատմամբ, այլև՝ իր գործընկեր-փաստաբանի նկատմամբ:

Նման պայմաններում Դատարանը՝ վկայակոչելով ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ, 7-րդ, 9-րդ, և 15-րդ հոդվածների 1-ին մասերը, 63-րդ հոդվածը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 18-րդ ,19-րդ, 20-րդ 21-րդ և 27-րդ հոդվածները, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 1.1, 2.2.2., 2.2.3, 2.7.1., 4.1, 4.2, 5.1.1, 5.1.2 և 5.2.1 կետերը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 115-րդ, 144-րդ, 144.1-րդ և 145-րդ հոդվածներով՝ 12.02.2016թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որի 1-ին կետով որոշել է. *«1. Թիվ ԵԱՔԴ/2420/02/12 քաղաքացիական գործով գործին մասնակցող կողմի՝ Նարինե Գասպարյանի ներկայացուցիչ, փաստաբան Քրիստինե Ստեփանյանի (փաստաբանական գործունեության արտոնագիր 148, տրված՝ 01.10.2006 թվականին) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու նպատակով՝ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմել ՀՀ փաստաբանների պալատին:»:*

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Պատասխանողը հայտնել է, որ «դատարանի դահլիճում իմ բոլոր գործողությունները՝ կոնտկրետ պարագայում եղել են հարկադրված, իմ նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդագիր ուղարկելու օրինական առիթ դրանք հանդիսանալ չէին կարող, այլ դա ընդամենը փաստաբանիս նկատմամբ ակնհայտ ճնշում գործադրելու միջոց էր տվյալ դատավորի կողմից, որը գտնում եմ, սրանով չարաշահել է իր ապշտոնեական լիազորությունները: Մանրամասն բացատրություն կներկայացնեմ լրացուցիչ, մինչ այդ Ձեզ եմ տրամադրում որոշ գրավոր ապացույցներ, առ տվյալ քաղ.գործի շուրջ տեղի ունեցած իրադարձությունները, որոնք էլ որ իրական պատճառ են հանդիսացել փաստաբանիս նկատմամբ դատավորի կողմից հաշվեհարդար տեսնելու համար: Դատաքննության ընթացքում իմ կողմից որևէ անօրինական գործողություն, օրինազանցություն, վիրավորանքներ հասցնել և այլն, իրականում տեղի չի ունեցել, առավել ևս այն աստիճանի, որ դատավորը ստիպված լիներ փաստաբանիս նկատմամբ միջոցներ ձեռնարկելու: Դատական նիստերի դահլիճը լքել եմ «առանց դատավորի թույլտվության» հարկադրաբար՝ դիմելով իրավունքի ինքնապաշտպանության, քանի որ դատավորը պարտավոր էր ընդհատել նիստը, ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելու հնարավորությունը ապահովելու համար, սակայն շարունակում էր քննել նախկին հարցը, անում էր ամեն բան դատաքննությունը չընդհատելու և լրացուցիչ ապրանքագիտական և շինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու համար:»

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը.

Կարգապահական գործը նախապատրաստող Ռոբերտ Մանվելյանի կողմից 13.05.2016թ կազմվել է եզրակացություն, որտեղ նշել է, որ ըստ էության Պատասխանողն ընդունել է, որ հակառակ Դատարանի կարգադրության լքել է դատական նսիտերի դահլիճը, սակայն այն մեկնաբանել է յուրովի:

19.05.2016թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի հոկտեմբերի 12-ին, ժամը՝ 19:45-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 3):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Պալատի խորհուրդը հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

Նարինե Գասպարյանի կողմից հայցադիմում է ներկայացվել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ընդդեմ Վազգեն Մխիթարյանի՝ Երևան քաղաքի Թավրիզյան 46 հասցեում գտնվող անշարժ գույքից Հայցվորին սեփականության իրավունքով պատկանող 1/2-րդ բաժնեմասը բնեղենով առանձնացնելու, իսկ դրա անհնարինության դեպքում գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու, ստացված գումարը ըստ բաժինների սեփականության մասնակիցների միջև բաժանելու պահանջների մասին:

Վազգեն Մխիթարյանի կողմից հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ Նարինե Գասպարյանի՝ Վազգեն Վոլոդյայի Մխիթարյանի ընդդեմ Նարինե Գասպարյանի՝ Երևան քաղաքի Թավրիզյան 46 տան նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունքում կողմերի բաժինները փոփոխելու, նշված գույքի 2/3-րդ բաժնեմասը որպես Հայցվորի բաժին սահմանելու, նշված գույքի 1/3-րդ բաժնեմասը որպես Պատասխանողի բաժին սահմանելու պահանջների մասին:

12.02.2016 թվականին նշանակված դատական նիստում Փաստաբանը ներկայացրել է իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման ու Պատասխանողին վտարելու պահանջների մասին հայցադիմում՝ խնդրելով այն ընդունել, իսկ Դատարանի՝ այն որպես հայցադիմում, թե հայցի առարկայի ու հիմքի փոփոխություն (լրացում) ընդունելու մասին դիմում ընդունելու վերաբերյալ հարցադրմանն ի պատասխան՝ փաստաբանը կոնկրետ դիրքորոշում չի ներկայացրել, որից հետո Դատարանը փաստաբանին բառացի պարզաբանել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149.7 հոդվածով սահմանված պահանջը, նշել է, որ Դատարանի վարույթում է գտնվում բաժնեմասի առանձնացման պահանջը, իսկ «հայցադիմում» վերտառությամբ փաստաթղթում փաստաբանը պահանջում է հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող փաստ ու վտարել Պատասխանողին, ուստի այս առումով պահանջել է ներկայացնել հիմնավորում ու հստակեցնել խնդրանքը:

Փաստաբանը նշել է, որ Դատարանի վարույթում գտնվող հայցադիմումն ինքը չի ներկայացրել, դա ներկայացրել է այլ փաստաբան, ուստի ինքը փոփոխում է դա այս գործով, քանի որ վեճի առարկայի կողմերը նույն անձինք են, վեճի առարկան նույնն է, գտել է, որ բաժնեմասի առանձնացման պահանջի էությունից է բխում իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատումը ու դրանից բխող կողմին վտարելու պահանջը՝ կատարելով նաև հետևյալ արտահայտությունը. *«դատարանը արդեն իսկ ծանոթ է գործին, ինչու՞ նորից մեկ այլ դատարան ժամանակ կորցնի, բացարձակ անիմաստ բան է մեկ այլ հայցով դիմելը»*:

Ի պատասխան հակառակորդ կողմի փաստաբան Ա. Պետրոսյանի հարցադրման՝ հայցադիմումով ներկայացված՝ բաժնեմասի առանձնացման պահանջից հրաժարվելու մասին, փաստաբան Քրիստինե Ստեփանյանը նշել է, որ ինքը պահանջն է փոփոխել՝ կատարելով հետևյալ արտահայտությունը *«հրաժարվելս որն է, ես եմ դա որոշում, դա իմ իրավունքն է»*:

Դատարանը նշել է, որ ելնելով գործի քննության ու արդարադատության շահերից, բառացի պարզաբանել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149.[7] հոդվածը, վկայակոչել է այն փաստը, որ Դատարանում հայցը ներկայացվել է բաժնեմասի առանձնացման պահանջով: Փաստաբան Քրիստինե Ստեփանյանը նշել է, որ այդ հայցն ինքը չի ներկայացրել, դա իր համար հիմք չէ, իսկ ինքը փոխում է հայցի հիմքն ու առարկան, որն էլ իրավաբանորեն շատ պարզ գործողություն է:

Դատարանը, լսելով փաստաբանի կարծիքը, հնարավորություն է տվել մյուս կողմի փաստաբան Ա. Պետրոսյանին ներկայացված «հայցադիմում»-ի վերաբերյալ հայտնելու դիրքորոշում, իսկ վերջինս հայտնել է, որ հայցի առարկայի ու հիմքի փոփոխությունն ամբողջությամբ փոփոխում է բաժնեմասի առանձնացման վերաբերյալ ներկայացված հայցի էությունը, իսկ բաժնեմասի առանձնացման պահանջի մասին Դատարանի վարույթում գտնվող հայցից կողմը չի հրաժարվում: Նշված առարկությունների ներկայացման ժամանակ փաստաբան Քրիստինե Ստեփանյանն անընդհատ միջամտել է, թույլ չի տվել, որպեսզի կողմը հնարավորություն ունենա հավասար պայմաններում իր առարկությունը ներկայացնելու Դատարանին:

Դատարանը, փաստաբանին հորդորել է հետևել դատական նիստում նախագահողի սահմանած կարգին, չխոչընդոտել նիստի բնականոն ընթացքին, հարգել իր գործընկերոջը, որպեսզի վերջինս ևս դիրքորոշում արտահայտի ու նրա դիրքորոշումը ևս հասանելի լինի Դատարանին, այն դեպքում, երբ նա փաստաբանին մինչ այդ պատշաճ լսել էր ու որևէ անգամ չէր ընդհատել, պահանջել է մինչև վերջ լսել մյուս կողմին, որից հետո փաստաբանին ևս կտրամադրվի արտահայտվելու հնարավորություն: Դրանից անմիջապես հետո, երբ փաստաբան Ա. Պետրոսյանը շարունակել է Դատարանին ներկայացնել իր առարկությունը, փաստաբան Քրիստինե Ստեփանյանը կրկին միջամտել է՝ կատարելով հետևյալ արտահայտությունը. *«վայ, ես մի հատ պալատ երևի գրություն ուղարկեմ, տեսնեն, սպուգեն, թե Ձեր արտոնագիրը էդ ով է տվել»:* Դատարանը, վերը նշվածի կապակցությամբ պահանջել է Փաստաբանից դրսևորել պատշաճ վարքագիծ:

Փաստաբան Քրիստինե Ստեփանյանը կրկին առանց Դատարանի թույլտվության միջամտել և փորձել է ընդհատել հակառակորդ փաստաբանին՝ վերջինիս հասցեին կատարելով հետևյալ արտահայտությունը. *«փոխում եմ հիմքը, չե՞ք հասկանում»:* Դրա արդյունքում Դատարանը կրկին պահանջել է փաստաբան Քրիստինե Ստեփանյանից չխանգարել կողմին, լսել ու թույլ տալ, որ նա արտահայտվի՝ հարգելով իր գործընկերոջը, սակայն նա կրկին միջամտել է ու ընդհատել է հակառակորդ կողմի փաստաբանի ելույթը:

Լսելով կողմերին՝ Դատարանը, երբ արդեն պետք է ներկայացված պահանջների ընդունման կապակցությամբ որոշում կայացներ, Քրիստինե Ստեփանյանը, խնդրելով թույլտվություն, սակայն առանց Դատարանի թույլտվության, հանդես է եկել հետևյալ բովանդակություն ունեցող հայտարարությամբ. *«քաղաքացիական գործի նյութերին ծանոթանալու ժամանակ ես պարզեցի, որ պատասխանողների իրավահաջորդի ներկայացուցիչն ամենայն հավանականությամբ չունի պատշաճ լիազորություններ ներկայացնելու է.*

Վարդանյանի շահերը, քանի որ լիազորագիրը հասարակ գրավոր ձևով է, դրան կցված չէ վերջինիս անձնագիրը, իսկ ես գիտեմ, որ նա բացակայում է ՀՀ-ից, այսինքն՝ լիազորագիրը միգուցե նույնիսկ չի էլ ստորագրել Է. Վարդանյանը»:

Վերը նշված հայտարարության կապակցությամբ Դատարանը նշել է, որ եթե փաստաբանը դա կապացուցի, ապա այդ հարցին կանդրադառնան, քանի որ Դատարանն արդեն իսկ պատշաճ է համարել փաստաբան Ա. Պետրոսյանի լիազորությունները, այսինքն՝ առկա է լիազորագիրը, որտեղ դրված Է. Վարդանյանի ստորագրությունը, իսկ նման պայմաններում այդ լիազորությունը չի կարող վիճարկվել, քանի որ Դատարանն է ստուգում ու որոշում, թե ներկայացուցչի լիազորությունները պատշաճ են, թե՝ ոչ, այդ հարցի լուծումը կողմին վերապահված չէ: Ի պատասխան Դատարանի դիրքորոշման՝ Քրիստինե Ստեփանյանն, առանց նախագահողի դիրքորոշումը մինչև վերջ լսելու, զուգահեռաբար կատարել է հետևյալ արտահայտությունները. *«ես ոչ մի բան չունեմ ապացուցելու, իսկ Դատարանը չի ստուգել լիազորությունները պատշաճ ձևով, կասկածի տակ եմ առնում Դատարանի գործողությունները, քանի որ լիազորագրին չի կցված լիազորողի անձնագրի պատճենը»:*

Դատարանը փաստաբանի հայտարարության կապակցությամբ հայտնել է իրավական դիրքորոշում առ այն, որ Դատարանի կողմից ստուգված և ընդունված փաստաբան Ա. Պետրոսյանի լիազորությունները պատշաճ են այնքան ժամանակ, քանի դեռ Դատարանը հակառակի մասին համապատասխան որոշում չի կայացրել: Դատարանը երկու ներկայացուցիչների լիազորությունների մասով մինչ այդ արդեն որոշում կայացրել է, ուստի այնպես ինչպես Փաստաբանը, այնպես էլ փաստաբան Ա. Պետրոսյանը երկուսով միասին Դատարանում հանդես են գալիս պատշաճ լիազորություններով: Փաստաբան Քրիստինե Ստեփանյանը կրկին միջամտել է՝ հայտնելով, որ ի տարբերություն հակառակորդ փաստաբանի, իր լիազորությունները պատշաճ են, քանի որ ինքը բոլոր փաստաթղթերը ներկայացրել է:

Դատարանն արձանագրել է, որ փաստաբան Քրիստինե Ստեփանյանի հայտարարության կապակցությամբ Դատարանն իր համապատասխան դիրքորոշումն արդեն իսկ արտահայտել է, որին ի պատասխան փաստաբանը նշել է, որ ցանկանում է ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնել նախագահողին, իսկ Դատարանը նշել է, որ Փաստաբանի ներկայացրած՝ «հայցադիմումի»-ն ընդունելու վերաբերյալ խնդրանքի վերաբերյալ կողմերին լսել է, դրա շուրջ քննարկումն ավարտվել է, ուստի համապատասխան որոշում այդ մասին կայացնելուց հետո կանդրադառնա կողմի մեկ այլ միջնորդությանը, եթե այդպիսին լինի:

Փաստաբանը պահանջել է չքննարկել ոչինչ, միաժամանակ, ի պատասխան Դատարանի հարցադրման՝ հայցադիմումը հետ վերցնելու վերաբերյալ, փաստաբան Քրիստինե Ստեփանյանը նշել է, որ ինքը հետ չի վերցնում այն, իսկ ինքնաբացարկը կներկայացնի երեք օրում:

Դատարանը նշել է, որ եթե միջնորդություն է ներկայացվել Դատարանին պահանջներն ընդունելու մասին, իսկ փաստաբանն այն հետ չի վերցնում, և այն քննարկվել է, ապա Դատարանը պետք է դրա վերաբերյալ որոշում կայացնի, իսկ փաստաբանը կատարել է հետևյալ արտահայտությունները. *«ես չեմ ուզում, որ իմ ներկայացրած «հայցադիմում»-ը նախագահողը քննի, թող մեկ այլ դատավոր այն*

քննի, ես Ձեզ չեմ վստահում, կներկայացնեմ ինքնաբացարկ, որի հիմքերը կբերեմ երեք օրում գրավոր»:

Դատարանը նշել է, որ ներկայացված միջնորդության կապակցությամբ պետք է կողմը լսի Դատարանի որոշումը՝ դատական նիստերի դահլիճում մնալով ու չլքելով այն, այնինչ փաստաբան Քրիստինե Ստեփանյանը, չենթարկվելով ու չկատարելով Դատարանի պահանջը *«ոչ», «այլևս ես չեմ ցանկանում, որպեսզի գործի քննությանը Դուք մասնակցեք»* արտահայտություններով լքել է դատական նիստերի դահլիճը:

Նշված փաստերը հաստատվում են Դատարանի կողմից Դատական սանկցիա կիրառելու մասին որոշմանը կից ներկայացված դատական նիստի արձանագրության ձայնագրության կրիչով, ինչպես նաև փաստաբան Քրիստինե Ստեփանյանի կողմից սույն կարգապահական գործի շրջանակներում ներկայացված առարկություններով, փաստաբան Քրիստինե Ստեփանյանի բացատրություններով:

<u>6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Համաձայն Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի փաստաբան Քրիստինե Ստեփանյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 1998 թվականին: 2006-2016թթ. ընկած ժամանակահատվածում 12 անգամ փաստաբանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ, և վերջինս ունի երկու չմարված տույժ:

<u>7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Քրիստինե Ստեփանյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

“Փաստաբանության մասին” ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1. կետի «Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:»:

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել, այս նորմի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմը՝

արդյո՞ք Պատասխանողը չի ենթարկվել Դատարանի կանոններին և արդյո՞ք անհարգալից վերաբերմունք է ցուցաբերել Դատարանի և գործին դատական նիստին ներկա անձանց նկատմամբ:

Տվյալ դեպքում Պատասխանողը չի ենթարկվել Դատարանի օրինականան կարգադրություններին, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտող գործողություններ է արել, որոնց մասին ինքը ևս ներկայացրել է իր կողմից ներկայացված բացատրություններով: Տվյալ վարքագիծը դրսևորվել է Պատասխանողի կողմից ներկայացված նախագահողին և մյուս կողմի ներկայացուցչին անհարկի ընդհատելով և դատական նիստերի դահլիճը առանց հարգելի պատճառի լքելու գործողություններով:

Մասնավորապես, 12.02.2016 թվականին նշանակված դատական նիստում Պատասխանողը ներկայացրել է իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման ու Պատասխանողին վտարելու պահանջների մասին հայցադիմում՝ խնդրելով այն ընդունել, իսկ Դատարանի՝ այն որպես հայցադիմում, թե հայցի առարկայի ու հիմքի փոփոխություն (լրացում) ընդունելու մասին դիմում ընդունելու վերաբերյալ հարցադրմանն ի պատասխան՝ փաստաբանը կոնկրետ դիրքորոշում չի ներկայացրել, որից հետո Դատարանը նշել է, որ Դատարանի վարույթում է գտնվում բաժնեմասի առանձնացման պահանջը, իսկ «հայցադիմում» վերտառությամբ փաստաթղթում փաստաբանը պահանջում է հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող փաստ ու վտարել Պատասխանողին, ուստի այս առումով պահանջել է ներկայացնել հիմնավորում ու հստակեցնել խնդրանքը: Պատասխանողը նշել է, որ ինքը փոխում է հայցի հիմքը և առարկան, սակայն ի պատասխան հակառակորդ կողմի փաստաբան Ա. Պետրոսյանի հարցադրման՝ հայցադիմումով ներկայացված՝ բաժնեմասի առանձնացման պահանջից հրաժարվելու մասին, փաստաբան Քրիստինե Ստեփանյանը նշել է, որ ինքը պահանջն է փոփոխել՝ կատարելով հետևյալ արտահայտությունը *«հրաժարվելս որն է, ես եմ դա որոշում, դա իմ իրավունքն է»*: Դատարանը, լսելով փաստաբանի կարծիքը, հնարավորություն է տվել մյուս կողմի փաստաբան Ա. Պետրոսյանին ներկայացված «հայցադիմում»-ի վերաբերյալ հայտնելու դիրքորոշում, իսկ վերջինս հայտնել է, որ հայցի առարկայի ու հիմքի փոփոխությունն ամբողջությամբ փոփոխում է բաժնեմասի առանձնացման վերաբերյալ ներկայացված հայցի էությունը, իսկ բաժնեմասի առանձնացման պահանջի մասին Դատարանի վարույթում գտնվող հայցից կողմը չի հրաժարվում: Նշված առարկությունների ներկայացման ժամանակ փաստաբան Քրիստինե Ստեփանյանն անընդհատ միջամտել է, թույլ չի տվել, որպեսզի կողմը հնարավորություն ունենա հավասար պայմաններում իր առարկությունը ներկայացնելու Դատարանին: Ա. Պետրոսյանը շարունակել է Դատարանին ներկայացնել իր առարկությունը, փաստաբան Քրիստինե Ստեփանյանը կրկին միջամտել է՝ կատարելով հետևյալ արտահայտությունը. *«վայ, ես մի հատ պալատ երևի գրություն ուղարկեմ, տեսնեն, ստուգեն, թե Ձեր արտոնագիրը էդ ով է տվել»:* Փաստաբան Քրիստինե Ստեփանյանը կրկին առանց Դատարանի թույլտվության միջամտել և փորձել է

ընդհատել հակառակորդ փաստաբանին՝ վերջինիս հասցեին կատարելով հետևյալ արտահայտությունը. *«փոխում եմ հիմքը, չե՞ք հասկանում»:*

Այնուհետև, փաստաբանը նշել է, որ ցանկանում է ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնել նախագահողին, իսկ Դատարանը նշել է, որ Փաստաբանի ներկայացրած՝ «հայցադիմումի»-ն ընդունելու վերաբերյալ խնդրանքի վերաբերյալ կողմերին լսել է, դրա շուրջ քննարկումն ավարտվել է, ուստի համապատասխան որոշում այդ մասին կայացնելուց հետո կանդրադառնա կողմի մեկ այլ միջնորդությանը, եթե այդպիսին լինի: Փաստաբանը պահանջել է չքննարկել ոչինչ, միաժամանակ, ի պատասխան Դատարանի հարցադրման՝ հայցադիմումը հետ վերցնելու վերաբերյալ, փաստաբան Քրիստինե Ստեփանյանը նշել է, որ ինքը հետ չի վերցնում այն, իսկ ինքնաբացարկը կներկայացնի երեք օրում: Դատարանը նշել է, որ եթե միջնորդություն է ներկայացվել Դատարանին պահանջներն ընդունելու մասին, իսկ փաստաբանն այն հետ չի վերցնում, և այն քննարկվել է, ապա Դատարանը պետք է դրա վերաբերյալ որոշում կայացնի, իսկ փաստաբանը կատարել է հետևյալ արտահայտությունները. *«ես չեմ ուզում, որ իմ ներկայացրած «հայցադիմում»-ը նախագահողը քննի, թող մեկ այլ դատավոր այն քննի, ես Ձեզ չեմ վստահում, կներկայացնեմ ինքնաբացարկ, որի հիմքերը կբերեմ երեք օրում գրավոր»:* Դատարանը նշել է, որ ներկայացված միջնորդության կապակցությամբ պետք է կողմը լսի Դատարանի որոշումը՝ դատական նիստերի դահլիճում մնալով ու չլքելով այն, այնինչ փաստաբան Քրիստինե Ստեփանյանը, չենթարկվելով ու չկատարելով Դատարանի պահանջը *«ոչ», «այլևս ես չեմ ցանկանում, որպեսզի գործի քննությանը Դուք մասնակցեք»* արտահայտություններով լքել է դատական նիստերի դահլիճը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Փաստաբան Քրիստինե Ստեփանյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելիս Խորհուրդը հաշվի է առել վերոհիշյալ հանգամանքները, այդ թվում՝ փաստաբանի անձը (չմարված տույժերի առկայությունը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ կետերի և 3-րդ մասի, ՀՀ «Փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Փաստաբան Քրիստինե Ստեփանյանին (արտոնագիր թիվ 148) ճանաչել մեղավոր «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.1. կետի պահանջների խախտման համար:***
2. ***Փաստաբան Քրիստինե Ստեփանյանի (արտոնագիր թիվ 148) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին 6 ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով, ութ ակադեմիական ժամ ժամաքանակով:***
3. ***Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:***

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող
Մարտուն Փանոսյան